

Գ. Սարգսյան

ԳՈՒՆԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Գառնիի հունարեն արձանագրության գյուտից մեկ տասնամյակ է անցել միայն, սակայն արդեն նրան նվիրված բավականին մեծ գրականություն կա: Նորագյուտ արձանագրության մասին առաջին հաղորդումը արեց Ատ. Լիսիցյանը¹, իսկ հետագայում նրա ուսումնասիրությանը ձեռնամուխ եղան Հ. Մանանդյանը (երկու անգամ)², Ա. Արրահամյանը³ և Կ. Վ. Տրեվերը (երկու անգամ)⁴, Ի. Առաքելյանը Գառնիում կատարված պեղումների մասին իր հաշվետվության մեջ ի մի է հալածել արձանագրությանը վերաբերող բոլոր առկա տեսակետները և ընթերցումները⁵:

Պետք է ասել, որ այս տեսակետները և ընթերցումները բաղմաղան են ու տարրեր: Անգամ արձանագրության ընդհանուր իմաստի վերաբերյալ գոյություն չունի միասնական տեսակետ:

Ահա արձանագրության պաշտոնական մասի տեքստը.

1. "Ἡλιος Τιβριδάτης [.....
2. Μεγάλης Ἀρμενίας ΑΝΑ[.....
3. ὡς δεσπότης αἰχτίσεν ΑΓ (կամ Ι) [.....
4. βασίλισσα τὸν ἀνίκητον ΚΑC [.....
5. αἵτους.αι. της βασιλεί[ας]
6. Μεγνης ὡς ἐξουσίας ΤΕΙΑΡΙ [.....
7. λειτουργὸς τῷ μεγάλῳ CΠ[.....
8. ω καὶ εὐχαρισ[.....
- 8ա. μετὰ Ματη
9. τοῦ μαρτυρίου

Այս տեքստը բերելիս, մենք հիմնվում ենք Կ. Վ. Տրեվերի ընթերցման վրա, որը մի քայլ առաջ է համեմատած Ատ. Լիսիցյանի, Ա. Արրահամյանի և Հ. Մանանդյանի ընթերցումների հետ: Կ. Վ. Տրեվերի մտցրած

¹ «Սովետական Հայաստան», 23 սեպտեմբերի, 1945 թ., № 201, և «Коммунист», 30 սեպտեմբերի, 1945 թ., № 207:

² Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, նույնը, Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, ՀՍՍՐ ԳԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1951 թ., № 4, էջ 9—35:

³ Ա. Արրահամյան, Գառնիի հունարեն արձանագրությունը, «Էջմիածին», 1947, «արտ-սպրիդ» էջ 61—72:

⁴ К. В. Тревер, Надпись о построении армянской крепости Гарни, Л., 1949; նույնը, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953 (հետագայում հրճատ՝ Тревер, ОИКА), էջ 174—211:

⁵ Б. Аракелян, Гарни, I, Результаты работ археологической экспедиции Института истории АН АрмССР 1949—1950 гг., Ереван, 1951, էջ 59—68:

ամենակարևոր ուղղումները սրանք են. 5-րդ տողի տողասկզբի ընթերցումը որպես αἵτους .αι. «տասնմեկերորդ տարում»¹. 6-րդ տողի տողասկզբում Μεγνέας հատուկ անվան ընթերցումը (փոխանակ նախկին με[γαλ]έας սխալ ընթերցումի). նույն տողի վերջին տառերի ΙΑΡΙ ընթերցումը (փոխանակ նախկին ΓΑΝ սխալ ընթերցումի). 8-րդ տողի տողասկզբի տեղը որոշելը և նրա առաջին տառի՝ ω-ի համարելը նախորդ տողից տողադարձված բառի վերջավորություն: Վերջապես, շատ կարևոր է այն փաստի հաստատումը, որ Μεγνέας անունը, ինչպես և Ցա և 9-րդ կարճ տողերը նախապես բացակայել են արձանագրության մեջ և մտցվել են հետագայում՝ հատկապես դատարկ թողած տեղերը՝ մի ուրիշ փորագրողի կողմից:

Առկա գրականության մեջ արձանագրության ընդհանուր իմաստը լուսարանված է երկու տարբեր ձևերով, որոնք վերջին հաշվով պայմանավորված են 7-րդ տողի λειτουργός տերմինի տարբեր թարգմանությամբ:

Ատ. Լիսիցյանը, Ա. Արրահամյանը և Հ. Մանանդյանը թարգմանում են այդ տերմինը որպես «աղոթք ուղղող», «աղոթող», «սպասավոր» («СВЯЩЕННОСЛУЖИТЕЛЬ»), այսինքն հիմնվում են տերմինի այն իմաստի վրա, որը տարածված է եղել գլխավորապես քրիստոնեական գրականության մեջ: Նրանց բացատրությամբ արձանագրությունը ստանում է կրոնական երանգ: Բերենք, օրինակի համար, Հ. Մանանդյանի թարգմանությունը. «Տիրան Տիրիդատես Մեծը Մեծ Հայաստանի, իշխելով որպես գերագույն տեր՝ կառուցեց մատուռը, անհաղթելին, իր քրոջ արքայադստեր համար, արքայական կալվածքից դուրս: Շենքի հովանու ներքո սպասավորը թող մեծին... նաև գոհություն ավետարանման համար»²:

Կ. Վ. Տրեվերը ընդունում է λειτουργός տերմինի անտիկ շրջանում տարածված նշանակությունը. «Այն անձը, որը պետության օգտին իր հաշվին կատարում էր որոշ առաջադրանքներ՝ այս կամ այն լիտուրգիան, այդպիսի անձը կոչվում էր լիտուրպոս»³:

Արձանագրության Կ. Վ. Տրեվերի տված թարգմանությունը հետևյալն է. «Հելիոս: Տիրիդատես Մեծ Մեծ Հայքի թագավոր: Երբ իշխանը (ВЛАСТИТЕЛЬ) կառուցեց ագարակ թագուհու համար (և) այս անառիկ բերդը իր թագավորության 11-րդ տարում, Մեննեասը, տիրոջ ցանկությամբ (որպես) մեծ սպարապետի լիտուրգոս (ի նշան) շնորհակալության Մատե վկայի ներկայությամբ վճարեց (ВЫКУПИЛ)»⁴:

Ըստ Կ. Վ. Տրեվերի, արձանագրության մեջ հիշված Մեննեասը կրել է բերդի կառուցման հետ կապված ծախքերի մի մասը (այսինքն լիտուրգիա է կատարել) և դրա փոխարեն իրավունք ստացել անմահացնելու իր անունը, մտցնելով այն նախօրոք պատրաստած արձանագրության մեջ: Երվել է նաև վկայի անունը⁵: Արձանագրության նման իմաստավորումը ոչ միայն հավանական է, այլև մեղ թվում է միակ հնարավորը:

¹ Այդպիսին է նաև Ա. Արրահամյանի ընթերցումը. տես «Գառնիի հունարեն արձանագրությունը», էջ 67:

² Я. А. Манандян, Новые заметки..., էջ 18 և 24. հմմտ. Հ. Մանուկյան, Գառնիի հունարեն արձանագրություն..., էջ 8:

³ Гревэр, ОИКА, էջ 184:

⁴ Նույնը, էջ 187:

⁵ Նույնը, էջ 206:

Հավանական է թվում նաև արձանագրության այն թվագրությունը, որ տալիս է Կ. Վ. Տրեյերը՝ մ. թ. 77 թ., Տրդատ Ա-ի օրոք,¹ թեև Հ. Մանանդյանի² և հատկապես Ա. Ի. Բոլտունովայի³ առարկությունները ցույց են տալիս, որ այս հարցը դեռևս վերջնականապես լուծված չի կարելի համարել:

Սակայն տեքստի մի քանի լրացումներ, որոնք առաջարկում է Կ. Վ. Տրեյերը, հատկապես հայկական ազարալ, տէր և սպարապետ տերմինների վերականգնումը հունական տեքստում, չի կարելի հիմնավորված համարել: Գրանք կարող են միայն թուլացնել Կ. Վ. Տրեյերի հիմնականում ճիշտ գիրքավորումը:

Ներկա հոգվածով մենք հավանություն չունենք Գառնիի արձանագրությանը նոր լուսարանություն տալու: Երա կարիքը չկա: Առաջարկում ենք միայն տեքստի մեղ ավելի հավանական թվացող վերականգնումը և որոշ գիտողություններ արձանագրության մեջ պարունակվող վավերագրի ընդթիվ մասին:

Արձանագրված վեմը մի ծայրում կոտրված է իր ամբողջ հաստությունամբ: Անհրաժեշտ է որոշել նրա նախնական երկարությունը:

Անկասկած, քարի աջ եզրը միաժամանակ եղել է նաև արձանագրության եզր: Այս երևում է այն բանից, որ մեր արձանագրության մեջ շրջանակի որևէ հետքեր չկան ոչ ձախ կողմից⁴, ոչ էլ վերևից ու ներքևից: Առավել ևս անտեղի կլիներ փնտրել այդպիսի հետքեր քարի աջ կողմում, ուր փորագրողը հնարավորություն չի ունեցել իր ուղած տեղում վերջացնելու այս կամ այն տողը, քանի որ տողադարձը ցանկալի չէր (այն թույլ է տրված արձանագրության մեջ միայն մեկ անգամ՝ 7—8-րդ տողերում):

Վեմի նախնական երկարությունը որոշվում է նրա հորիզոնական մակերեսի վրա (ուր հետագայում խաչ են փորագրել) գտնվող այն փոսիկներով, որոնք ծառայել են քարը հարևան քարերին կցող երկաթե գամերը ամրացնելու համար: Այս փոսիկները դասավորվում էին համաչափ (սիմետրիկ), այնպես որ քարի ձախակողմյան փոսիկի և ձախ եզրի միջև եղած տարածությունը պետք է հավասար լիներ աջակողմյան փոսիկի և աջ կոտրված եզրի միջև եղած տարածությանը: Նշած տարածություններից ձախը ներկայումս երկար է աջից 11 սմ: Գումարելով այս թիվը քարի աջմյան երկարությունը, որ հավասար է 164 սմ, ստանում ենք նրա նախնական երկարությունը՝ մոտավորապես 175 սմ, Հետևաբար, քանի որ քարի արձանագրված կողմի ամենաերկար մասը հավասար է միջին հաշվով

¹ Тревер, ОИКА, էջ 193—200:

² Հ. Մանանդյանը (Новые заметки..., էջ 24—26), բրիտոնեական համարելով արձանագրության մեջ կիրառված տերմինները, վերագրում է այն Տրդատ Գ-ի ժամանակին:

³ Ա. Ի. Բոլտունովան (գրախոսությունը Тревер, ОИКА-ի մասին, ВДИ, 1954, № 4, էջ 91—92) կարծում է, որ արձանագրությունը չէր կարող գրված լինել մ. թ. 2-րդ դարի կեսերից ավելի վաղ:

⁴ Հաստատված է, որ արձանագրված քարը սկզբնապես գտնվել է աշտարակի շարվածքի մեջ, այն տեղում, ուր աշտարակը հատվում է պարսպի հետ, ընդ որում քարի ձախ կողմը մտած է եղել պարսպի շարվածքի մեջ ընդհուպ մինչև արձանագրության ձախ եզրը: Անգամ ֆոտոնկարի վրա երևում է քարի այդ մասի համեմատաբար կոպիտ մշակվածությունը:

150 սմ, ասյա կոտրված կտորի երկարությունը համապատասխան տեղում (3—7-րդ տողերի դիմաց) պետք է լիներ միջին հաշվով 25 սմ: Այդ տարածություն վրա կարող էր տեղավորվել մինչև 6 տառ (5 տառ միանգամայն ազատ, 6 տառ՝ փոքր ինչ սեղմ գրություն): Այս տվյալներով էլ մենք կառաջնորդվենք տեքստը վերականգնելիս:

Արձանագրության առաջին տողերը պարունակում են թագավորի անունը և տիտղոսի Տիտղոսի վերականգնման հարցում ուսումնասիրողները հենվում են Ապարանի հունարեն արձանագրության տվյալների վրա: Այնտեղ կարդում ենք. Τριδατης [δ] μέγας Μεγαλ[ης] Ἀρμενίας βα[σι]λεύς¹: Սրա համեմատ Գառնիի արձանագրության առաջին տողում ուսումնասիրողները վերականգնել են μέγας «մեծ» բառը: Երկրորդ տողում վերականգնում են ἀνα[κτωρ], ἀνα[κτος] (Կ. Վ. Տրեվեր, Ա. Արրահամյան), ἀνα[οσων] «իշխելով» (Հ. Մանանդյան): Այսպիսով, Ապարանի արձանագրությունից ընդօրինակված է μέγας տերմինը, որն ամենևին հայ Արշակունիների տիտղոսը չէր, այլ լուի Ապարանի արձանագրության մեջ հիշված Տրդատի պատվավոր էպիտետը: Գառնիի արձանագրության մեջ հիշատակված Տրդատի համար այդ էպիտետը բոլորովին էլ անհրաժեշտ չէր²: Մինչդեռ βασιλεύς տիտղոսը, որը ամենասովորականն է «թագավոր» հասկացությունը արտահայտելու համար, բացառված է ուսումնասիրողների կողմից և փոխարինված մի ուրիշ՝ արխայիկ և հազվագյուտ, տերմինով:

Մեզ թվում է, որ հարկավոր էր հակառակն անել և μέγας բառի փոխարեն լրացնել առաջին տողը βασιλεύς բառով³: Այդ տիտղոսի բացակայությունը արձանագրության մեջ միանգամայն անհասկանալի կդարձներ βασιλεισ(σ)α «թագունի» և βασιλεια «թագավորություն ժամանակաշրջան» բառերի առկայությունը: Դրանց փոխարեն կսպասեինք ἄνασσα և ἀνακτορία բառերը և կամ δέσποινα և δεσποτεία բառերը, եթե հետևելով Ատ. Լիսիցյանին ու Հ. Մանանդյանին Տրդատի հիմնական տիտղոսը համարեինք 3-րդ տողի δεσπότης բառը: Քանի որ հիշյալ բառերը բացակայում են, մենք

¹ Գառնիի պեղող հնագիտական էքսպեդիցիայի ղեկավար Բ. Ն. Առաքելյանը հաղորդեց, թե բժրդի պարսպի ուրիշ բառերի չափադրությունը ցույց է տալիս, որ երկաթե դամբարի համար պատրաստված փոսիկները իսկապես դասավորված են համաչափ (սիմետրիկ), եթե հաշվի չառնվի աննշան տատանումը (1—2 սմ):

² Արձանագրության առաջին բառին՝ ἄλιος «արև»-ին, տալիս են դանդաղ բացատրություններ: Հ. Մանանդյանը համարում է այն թագավորի անվան բաղադրամաս (Нобые заметки..., էջ 13), Ա. Արրահամյանը՝ թագավորի անվան ածական (Գառնիի հունարեն արձանագրությունը, էջ 67—68): Ըստ Կ. Վ. Տրեվերի բացատրության, այստեղ ուղղակի աստծու հիշատակումն է՝ արձանագրության սկզբում, մի բան, որ հանդիպում է երբեմն հունական էպիգրաֆիկայում (Тревел, ОИКА, էջ 205): Հնարավոր ենք համարում նաև մի այլ բացատրություն: Մի գուցե ἄλιος-ի հիշատակումը այստեղ պետք է կապել թագավորի և զինաստիայի այն պաշտամունքի հետ, որը ընդունված էր հին Հայաստանում հարևան հելլենիստական երկրների օրինակով (տե՛ս Г. Х Саркисян, Город древней Армении, Ереван, 1954 (автореферат кандидатской диссертации), էջ 9):

³ Тревел, ОИКА, էջ 273:

⁴ Այն անհրաժեշտ չի կարելի համարել նույնիսկ այնպիսի դեպքում, եթե պարզվի, որ երկու արձանագրություններում էլ միևնույն Տրդատն է հիշատակված: Տրդատը կարող էր արժանացած լինել այդ էպիտետին Գառնիի արձանագրության փորագրումից հետո:

⁵ Ինչպես արել է Հ. Մանանդյանը արձանագրության վերականգնման իր առաջին փորձանշանում (Գառնիի հունարեն արձանագրությունը..., էջ 5):

ավելի հավանական ենք համարում տիտղոսի Τριδάτης [βασιλεὺς] Μεγάλης Ἀρμενίας վերականգնումը՝ Հետևյալ՝ ΑΝΑ տառերի խնդիրը մեզ համար դեռևս պարզ չէ:

Տիտղոսի ¹ հետո, Կ. Վ. Տրեվերի կարծիքով, սկսվում է ժամանակի երկրորդական նախադասություն, որը ներածված է *ὡς* «երբ» շաղկապով և որի ենթական է *δεσποτης*-ը: Այս, իհարկե, հնարավոր է, բայց ավելի հավանական է այստեղ տեսնել ինքնուրույն նախադասություն, որի ենթական է Τριδάτης-ը, իսկ *δεσποτης*-ը՝ նրա բացահայտիչն է: Այս դեպքում *ὡς* շաղկապը ներկայանում է իր «որպես» նշանակությամբ և դարձվածքը վերաբերվում է նախադասության ստորոգյալին (*αἰχτισεν* = *εἰχτισεν*)¹, որի հետ միասին պետք է թարգմանվի այսպես՝ «որպես դեսպոտ հիմնեց...»²:

Նախադասության ուղիղ խնդիրը գտնում ենք 4-րդ տողում՝ *τον ἀνέκητον ΚΑC*: Կ. Վ. Տրեվերը վերջին բառի լրացման համար երկու տերմին է առաջարկում՝ *το καστρον* և *ὁ καστελλος*, բնդ որում հակված է ընդունելու այդ տերմիններից առաջինը, որովհետև նրա կարծիքով այն ավելի լավ է տեղավորվում տողի մեջ: Մեզ ավելի հավանական է թվում երկրորդ, արական սեռին պատկանող (ինչպես և պետք է լինի ըստ կոնտեքստի) տերմինը, որը նույնպես կարող է տեղավորվել տողի մեջ. համանվանդ որ *λλ* մեր արձանագրության մեջ կարող էր փոխարինված լինել *λ-ով*, ինչպես, օրինակ, *σσ* փոխարինված է *σ-ով* *βασιλει(σ)α* բառի մեջ: Այդ տերմինը, որը ընդօրինակված է լատիներեն *castellum* տերմինից, հունարենում հանդիպում է ավելի վաղ քան *το καστρον*-ը, օրինակ, Ստրաբոնի և Պլինիոսի մոտ²:

Չորրորդ տողի *βασιλει(σ)α* բառը իր շարանյութական դրությամբ անուղղակի խնդիր է և կարող է միայն տրական հոլովով լինել՝ *βασιλει(σ)α(ι) αἰμαφονίζου* (այսինքն *αἰμαφονίζου համար*): Թույլ է տրված, սակայն, երկու շեղում ուղղագրական կանոններից (չհաղված *σσ* փոխարինումը *σ-ով*), բառավերջի յ տառը փոխարինված է *α-ով* և բացակայում է *iota adscriptum*-ը: Պետք է ասել, որ վերջին շեղումը սովորական է մեր արձանագրության մեջ (համտ. *τῷ μεγάλῳ*) և ընդհանրապես հունական էպիգրաֆիկայում:

Նախադասությունը եզրափակող 5-րդ տողը ոչ մի կասկածի տեղիք չի տալիս:

Վերլուծված նախադասությունը թարգմանվում է այսպես. «...Տրդատը, Մեծ Հայքի թագավորը... որպես դեսպոտ հիմնեց... թագուհու համար այս անառիկ բերդը թագավորության 11-րդ տարում»:

Մնում է պարզել, թե ինչ բառ է եղել 3-րդ տողի վերջում: Այդ բառի պահանջված տառերից վերջինը Γ կամ Ι է, նախավերջինը՝ Α: Երանց նախորդող Ν տառը, համաձայն հունարենի հնչյունարանության օրենքների, կարող է վերաբերվել կամ վերականգնվող կամ նախորդող բառին:

Ուսումնասիրողների կողմից առաջարկված են մի քանի վերականգնումներ, *νά[ον]* «տաճար» (Ստ. Լիսիցյան), *να[διον]* «տաճարիկ» (Ա. Արաճաճյան), *να[σxon]* «մատուռ» (Հ. Մանանդյան) և վերջապես հայկական ազգային բառը *ἀγ[αρχον]* ձևով (Կ. Վ. Տրեվեր): Այս բոլոր վերականգնումները մի բանում իրար նման են՝ բոլորն էլ տրված են հայցական հոլովով:

¹ Այս արտահայտության իմաստի մասին տես ստորև, էջ 54—56:

² *St. Trever*, *ОΙΚΑ*, էջ 180:

և համակնություն ունեն ուղիղ խնդիր լինելու: Այնինչ, ելնելով նախադասության շարահյուսական կառուցվածքից, այստեղ ուղիղ խնդիր չի կարելի տեսնել: Այդպիսինը, ինչպես նշեցինք, գտնվում է հետևյալ տողում: Եթե առկա լիներ նաև երկրորդ ուղիղ խնդիրը, ապա այդ երկուսը իրարից անջատված չէին լինի $\beta\alpha\tau\iota\lambda\iota\sigma(\sigma)\alpha$ բառով, կամ հակառակ դեպքում $\chi\alpha\iota$ -ով շաղկապված կլինեին: Պնդել, թե այստեղ պետք է անպատճառ ուղիղ խնդիր լինի, կարելի է միայն իսկական ուղիղ խնդիրը (4-րդ տողի վերջում) թոհաբերելու գնով, այսինքն կարդալով, ինչպես Հ. Մանանդյանը, $\gamma\chi\iota\sigma\chi\omicron\upsilon\ldots\tau\omicron\upsilon\gamma\ \alpha\nu\iota\chi\eta\tau\omicron\upsilon\gamma$ որ տալիս է «անհաղթելի մատուռ» անընդունելի իմաստը:

Ավելացնենք նաև այն, որ հունարեն արձանագրության մեջ հայերեն բառ տեսնելը լոկ առաջին երկու տառի հիման վրա՝ չի կարելի համոզիչ համարել: Մյուս լրացումներից $\gamma\alpha\omicron\varsigma$ «տաճար»-ը հաշվի չի առնում պահպանված տառերը, իսկ $\gamma\alpha\omicron\varsigma$ -ի փոքրացուցիչ հաղվագյուտ ձևերը՝ $\gamma\alpha\iota\delta\iota\omicron\upsilon\gamma$, $\gamma\chi\iota\sigma\chi\omicron\varsigma$, դժվար թե օգտագործված լինեին թագավորական շինարարական արձանագրության մեջ:

Պետք է նշել նաև հետևյալը. բացի Կ. Վ. Տրեվերից, մնացած ուսումնասիրողները ձգտում են, ինչ գնով էլ լինի, գտնել արձանագրության մեջ «տաճար» բառը, որովհետև Մովսես Խորենացին խոսելով Դաոնիի ամրոցի շինության մասին հաղորդում է. «Ջայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գաոնւոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ. յորում շինեալ և տուն հովանոց¹, մահարձանօք, սքանչելի դրօշաձովք, բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդիստոյ, և գրեալ ի նմա զհիշատակ իւր հելլենացի գրով²»:

Սակայն հիմնականորեն հաստատված է, որ արձանագրված վեմը ծագում է ոչ թե տաճարի շարվածքից, ինչպես կարծում են արձանագրության մեջ «տաճար» բառը վերականգնող հեղինակները, այլ բերդապարսպի շարվածքից³: Այսպիսով, մեր արձանագրությունը ոչ մի ընդհանուր բան չպետք է ունենա Մովսես Խորենացու նշած արձանագրության հետ⁴ և տաճարի հիշատակումը նրա մեջ ամենևին պարտադիր չէ:

Այսպիսով, 3-րդ տողի վերջին բառի մինչև օրս առաջարկված վերականգնումները չի կարելի բավարար համարել:

¹ Խորենացին նկատի ունի տաճարը:

² Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, 2-րդ դիրք, գլ. 2:

³ Б. Аракелян, Гарни էջ 62. հմմտ. Тревер, ОИКА, էջ 194:

⁴ Բ. Ն. Առաքելյանը (Гарни, էջ 68. հմմտ. Тревер, ОИКА էջ 176, ծան. 4) առաջ է քաշում մի ուրիշ բացատրություն. եթե Խորենացու վերահիշյալ վկայության մեջ տաճարին վերաբերող նախադասությունը համարել միջանկյալ, ապա կստացվի, որ արձանագրությունը գրված է եղել ոչ թե տաճարի, այլ բերդի վրա: «Այդպիսի դեպքում, դրում է Բ. Ն. Առաքելյանը, դուրս կդար, որ մեր արձանագրությունը հենց այն է, որը հիշատակված է Մովսես Խորենացու մոտ: Բանասիրական տեսակետից թույլատրելի այս մեկնարանմանը հարում է Կ. Վ. Տրեվերի այն ցուցմունքը, թե «1000—1010 թ.թ. պեղումների և ուսումնասիրական աշխատանքների ժամանակ պարզվել է, որ տաճարի պատերի վրա աեղ չի եղել Մովսես Խորենացու հիշատակած արձանագրության համար. բոլոր այն բառերը, որոնց վրա նման մի տեքստ կարող էր տեղավորված լինել, այն տարիների պեղումների ընթացքում հայտնաբերվել են, բայց նրանց վրա չի հաջողվել գտնել ոչ մի արձանագրություն կամ արձանագրության հետք» (Тревер, ОИКА, էջ 176): Պետք է ասել, որ այսպիսի բացատրության դեպքում ևս տաճարի հիշատակումը արձանագրության մեջ պարտադիր չէ:

Խնդիրը, սակայն, չափազանց պարզ լուծում ունի: Հիշյալ տեղում ոչ այլ ինչ է եղել, քան թագուհու անունը՝ տրական հոլովով: Մեր արձանագրության մեջ, ուր հիշատակված է բերդը հիմնող թագավորի անունը, ծախքերը տանող լիտուրգոսի անունը, վերջապես վկայի անունը, չէր կարող հիշատակված չլինել այն անձի անունը, որի համար կառուցվել է բերդը:

Թագուհու անունը սկսվում է Ναγ(Αγ) կամ Ναι(Αι) տառերով, բայց, թե ինչ անուն է եղել այդ, դժվար է ասել: Մի գուցէ որեւէ հունական կամ հոմեական անուն (օրինակ՝ Ἀγαθή, Ἀλῖα) կամ հայկական անուն է եղել:

Այսպիսի եզրակացությունների է բերում մեզ արձանագրության առաջին նախադասության վերլուծությունը:

Երկրորդ նախադասության ենթական է Μεννέας հատուկ անունը: Դրան հետևող բառերը մինչև օրս կարդացվել են ὑπο ἐξουσίας (կամ՝ ἐξουσία(ι) տրական հոլովով): Այս ընթերցումի դեմ դժվար կլինեին առարկել, եթե այն չխանգարեր հետևյալ CTEIAP I կամ TEIAP I տառաշարի իմաստավորմանը:

Հ. Մանանդյանի στεγαν[ου] ընթերցումը չի համապատասխանում պահպանված տառերին: Անհավանական չէ այդ տեղում «տիարա» բառի վերականգնումը, որ առաջարկված է Հ. Բարթիկյանի կողմից¹, սակայն այն չի բացատրում վերջին և տառի առկայությունը:

Կ. Վ. Տրեյերը այս դեպքում ևս ընթացել է հարկավոր տերմինը հայոց լեզվում փնտրելու ուղիով և առաջարկում է այստեղ կարդալ տէր (սեռ. հոլ. տեառն) բառը: Բայց դժվար է համաձայնվել հունարեն տեքստի մեջ մի այնպիսի հայկական տերմինի ներմուծմանը, որին համարժեք հունարեն բառը (δεσπότης) արդեն կա արձանագրության մեջ²: Բացի դրանից, այս ընթերցումը նույնպես բացատրություն չի տալիս վերջին և տառի առկայությանը ոչ հունարենի, ոչ էլ հայերենի ձևաբանության տեսակետից:

Մենք առաջարկում ենք հիշյալ տառաշարի մի մասը կցել նախորդ բառին և ἐξουσία բառի փոխարեն կարդալ այստեղ ἐξουσιαστος «իշխանություն ունեցող», «իշխանավոր» բառը, տրական հոլովով, այսինքն՝ ἐξουσιαστῷ(ι), հաջվի առնելով, որ մեր արձանագրության մեջ η(ι)-ը փոխարինվել է ε(ι)-ով, որ միանգամայն հնարավոր է, եթե հիշենք, որ երկուսն էլ հնչում էին և: Ստացվում է ὑπὸ ἐξουσιαστέϊ դարձվածքը, որի իմաստն է «իշխանավորի հովանավորության ներքո»: Հավանորեն այստեղ ևս խոսքը Տրդատի մասին է:

Տողավերջի API տառերի մասին կասենք քիչ ներքև:

Յոթերորդ տողում պրորիեմատիկ են միայն վերջին CΠ տառերը: Առաջարկված լրացումներից σ[εμνῶ]-ն (Հ. Մանանդյան) հաջվի չի առնում Π տառի առկայությունը, որը թեև փաստված է, սակայն անկասկած կարդացվում է, իսկ Ստ. Լիսիցյանի կողմից առաջարկված σπ[ῆ] (տրակ. հոլ. το σπέος «այր», «քարանձավ» բառի) բառը կոնտեքստին չի բավարարում:

Կ. Վ. Տրեյերը այստեղ ևս հունական տեքստը լրացնում է հայկական բառով, բայց թվում է, դրա համար բավարար հիմք չկա: Ապարապետ բառը, σπαραπέτω հունարեն տրական հոլովի ձևով, վերականգնված է միայն առաջին երկու տառերի առկայության հիման վրա:

¹ Б. Аракелян, Гарни, էջ 66, ծանոթ. 1:

² Հմմտ. Я. А. Манандян, Новые заметки..., էջ 18:

Պետք է նշել նաև հետևյալը. Լիտուրգիոյ ընթացքի հետո, ըստ Կ. Վ. Տրեվերի ճիշտ ցուցմունքի (բայց ավելի հաճախ Լիտուրգիոյ բայցի հետո), կարող է զրվել տրական հոլով, բայց նման դեպքերում այն նշանակում է «օգտին», «համար» (օրինակ՝ Լիտուրգիոյ տի քոլեյ լիտուրգիա կատարել քաղաքի օգտին (կամ՝ համար)»): Այսպիսով, Կ. Վ. Տրեվերի Լիտուրգիոյ տի մեղալոյ սք[α-ραπετ]ω չի համապատասխանում նրա մեծ սպարապետի լիտուրգոս թարգմանութեանը և պետք է թարգմանվի՝ «լիտուրգոս մեծ սպարապետի օգտին (կամ՝ համար)», ինչ էլ որ այդ նշանակի:

Ա. Ի. Բոլտուկովան առաջարկում է սպարապետ տերմինը փոխարինել համասեռ ἐπιτροπος¹ տերմինով, որը հանդիպում է Արմազի երկրեզու արձանագրութեան մեջ²: Սակայն այդպիսի ընթերցումը անհնարին է. Շտառը միանգամայն պարզ կարգացվում է քարի վրա:

Մեզ համոզիչ չի թվում Կ. Վ. Տրեվերի այն պնդումը, որ տվյալ տեղում պետք է անպատճառ որոնել որեւէ կոչում կամ տիտղոս³: Թե ինչ իմաստ պիտի ունենար որոնելի բառը, այդ մասին ակնարկում է 8-րդ առդի վերջին՝ εὐχαριστία εὐχαριστία εὐχαριστία զանապառնութեան բառը, որից պահպանվել են εὐχα-րիս տառերը: Քանի որ այդ երկու բառերը շաղկապված են չալ շաղկապով, նրանք, հավանաբար, իրենց իմաստով պետք է որ համասեռ լինեն: Նույն պատճառով նրանք պետք է տրված լինեն միեւնույն, այն է՝ տրական հոլովով: Հիմնվելով պահպանված СП տառերի վրա, բնական կլինեի վերականգնել այստեղ σπουδῆ εὐχαριστία զանապառնութեան, «եռանդ» բառը, որը հունական է պիգրաֆիկայում շատ հաճախ օգտագործվում է լիտուրգոսների կամ մագիստրատների գործունեութեան զնահատման համար: Բայց σπουδῆ բառը իգական սեռի է, իսկ մեր տեքստում եղել է արական կամ չեզոք սեռի գոյական, σπουδῆ բառից ածանցված և նույն նշանակութունն ունեցող՝ հավանորեն σπουδασμός բառը:

Նախքան նախագասութեանը իր ամբողջութեամբ դիտելը, պետք է նշել, որ որոշ նմանութուն (ավելի ճիշտ՝ որոշ զուգահեռականութուն) կա արձանագրութեանը կազմող երկու նախագասութեանների կառուցվածքների միջև, այն է՝ յուրաքանչյուր նախագասութեան մեջ առկա են երկու-երկու բառ, տրված ուղղական հոլովով՝ ենթակաները՝ Τριδότης, Μεννέας և նրանց բացահայտիչները՝ δεσποτης, Լիտուրգոս, Առաջին նախագասութեան մեջ այդ երկու բառերը կապված են ὡς «որպես» շաղկապով (Τριδότης... ὡς δεσποτης... «Տրդատը... որպես գեսպոտ...»), և, այդպիսով, որոշ հիմք կա վերականգնել այդ շաղկապը նաև երկրորդ նախագասութեան մեջ (Μεννέας... [ὡς] Լիտուրգոս «Մեննեասը... [որպես] լիտուրգոս...»):

Նախագասութեանը իր ամբողջութեամբ վերականգնելու համար պահանջում է ստորոգյալը: Լրիվ համաձայն ենք Կ. Վ. Տրեվերի այն տեսակետին, թե այստեղ անհրաժեշտ է մի այնպիսի ստորոգյալ, որը կրնա թագրեր Մեննեասի՝ լիտուրգոսի դերում կատարած գործողութեանները: Սակայն կարիք չկա անպայման կարծելու, ինչպես անում է Կ. Վ. Տրեվերը:

¹ А. И. Болтунова, «Нашествие Тревора», ОИКА-ի մասին ВДИ, 1954. № 4, էջ 20:


² Г. В. Церетели, Армазская билингва, Тбилиси, 1941, էջ 63—67:

³ Тревора, ОИКА, էջ 194.

թե նշված իմաստը ունեցող ստորոգյալը տեքստի մեջ դրված չի եղել, այլ միայն հասկացվել է:

Ստորոգյալը ենթադրարար կարելի է վերականգնել 7-րդ տողի վերջում որպես ἀρι[θμεί] σφδարում է: Պետք է հաշվի առնել, որ ἀριθμέω բայը (որի հիմնական նշանակությունն է «հաշվել») սֆդարելու իմաստով կիրառվելիս, սովորաբար ուղեկցվում է մի լրացումով, որը ցույց է տալիս, թե ի՞նչ է վճարվում: Այսպիսի լրացումը կարող է արտահայտված լինել χρυσός «ոսկի», ἄργυρος «արծաթ» և այլ բառերով, որոնցով կարելի է արտահայտել «գին» հասկացությունը:

Եթե մեր արձանագրության մեջ այսպիսի մի լրացում եղել է, ապա այն կարող էր տեղափոխվել միմիայն 8-րդ տողի վերջում, ուր εὐχαριστία բառը լրացնելուց հետո տեղ է մնում ևս 5—6 տառի համար: Ենթադրարար «գին» իմաստով վերականգնում ենք χρυσός «ոսկի» բառը:



Գառնիի հունարեն արձանագրությունը:

Մեր առաջարկած վերականգնումներով արձանագրությունը իր ամբողջությամբ ստանում է հետևյալ տեսքը.

1. Ἡλιος Τιριδατης [βασιλευς]
2. Μεγάλης Ἀρμενίας ΑΝΑ[.....]
3. ὥς δεσπότης αἵκτισεν Ἀγ[.....]¹
4. βασιλίσ(σ)α(ι) τὸν ἀνίκητον κάσ[τελ(λ)ον]
5. αἵτους·αι· τῆς βασιλει[ας]
6. Μεννέας ὑπὸ ἐξουσιαστεῖ ἀρι[θμεῖ? ὥς?]
7. λιτουργὸς τῶ(ι) μεγάλω(ι) σπ[ουδασμ-]
8. ὦ(ι) καὶ εὐχαρισ[τια(ι) χρυσόν?]
- 8ա. μετὰ Ματθίου
9. τοῦ μάρτυρ(ος)²

«Հիլիոս Տրիատր, [Թագավորը] Մեծ Հայքի... որպես դեսպոտ հիմնեց Ագ[.....] Թագունու համար այս անառիկ բեր[դը] Թագավորության 11-րդ

¹ Կամ Αἰ[.....], հնարավոր է նաև αἵκτισε Νᾱγ[.....] կամ Ναι[.....]:

² 8ա և 9 տողերի այս ընթերցումը առաջարկված է Ի. Ի. Տոլստոյի կողմից. Տե՛ս Тревєр, ОИКА, էջ 188:

տարում: Մեննեասը, իշխանավորի հովանավորության ներքո, վճարում է որպես լիտուրգոս, մեծ եռանդով և շնորհակալությամբ, գինը՝ Մատե վկայի ներկայությամբ:

Ընդհանուր հայացք ձգելով արձանագրության վրա, տեսնում ենք որ նրան հատուկ են իրավական փաստաթղթի որոշ գծեր¹: Արձանագրության տեքստը ստանդարտ է եղել այն լրացվել է հատուկ անուններով այնպես, ինչպես մեր օրերում լրացվում են բլանկները: Նման արձանագրություններ, լրացված, սակայն, ուրիշ անուններով, անշուշտ պետք է որ գոյություն ունենային նաև այլ վայրերում, ամենուրեք, ուր կար արքունական շինարարություն: Արձանագրության իրավական բնույթը երևում է նաև վկայի առկայությունից: Արձանագրությունը, բացի այն, որ պիտի անմահացներ լիտուրգոսի անունը, հավանորեն ծառայել է նաև լիտուրգիայի ակտը վավերացնելու համար, կամ մի գուցե հանդիսացել է համապատասխան փաստաթղթի պատճենը:

Այս բոլորը բերում է այն եզրակացության, թե արձանագրությունը պետք է կազմված լինի մի որոշակի ստանդարտ ֆորմուլայով: Այդ մասին է վկայում նաև վերևում հիշված նմանությունը (գուգահեռականությունը), արձանագրության երկու նախադասությունների կառուցվածքների միջև:

Ֆորմուլան, ելնելով մեր արձանագրության առկա տվյալներից և մեր լրացումներից, այսպիսի տեքստ է ունեցել. NN βασιλεὺς... ὡς δεσπότης ἐκτίσεν... τῆς ΜΜ... ἀρχιεπί... ὡς λιτοῦργός... χρυσὸν μετὰ ΚΚ τοῦ μαρτυροῦ «NN թագավոր... որպես զեսպոտ... հիմնեց... այսինչ օրյեկտը: MM-ը... վճարում է որպես լիտուրգոս... գինը ΚΚ վկայի ներկայությամբ»:

Ինչպես տեսնում ենք, ֆորմուլայի առաջին նախադասությունը բնութագրում է թագավորի ֆունկցիան՝ զեսպոտի դերում, իսկ երկրորդը՝ մասնավոր անձի ֆունկցիան՝ լիտուրգոսի դերում:

Ֆորմուլայի իմաստը ամենեին չի փոխվի, եթե ստորոգյալի դերում մեր կողմից ենթադրաբար վերականգնած ἀρχιεπί... բայց փոխարինվի մի այլ բայով, որը, սակայն, անհրաժեշտաբար պետք է նույն իմաստն ունենա, կամ եթե ենթադրել, ինչպես Կ. Վ. Տրևերը, որ այդ իմաստը ունեցող ստորոգյալը քարի վրա փորագրված չի եղել, այլ միայն հասկացվել է:

Ասածի կապակցությամբ հարց է առաջանում, թե ինչո՞ւ որևէ օրյեկտ հիմնադրելիս թագավորը ներկայանում է որպես զեսպոտ և ինչ իմաստ ունի χτίζω «հիմնել» բայը տվյալ դեպքում:

Հելլենիստական ժամանակաշրջանում գոյություն ունեի մի սովորույթ՝ սերտ կապված հին արևելյան տրագիկիաների հետ, ըստ որի որևէ օրյեկտի (մեծ մասամբ քաղաքի, բայց նաև տաճարի, ամրոցի և այլն) հիմնադրումը թագավորի ֆունկցիան էր: Հելլենիստական շրջանում առաջացած բազմաթիվ քաղաքները բոլորն էլ հիմնադրված էին որևէ թագավորի կողմից և կրում էին գինաստիկ անուններ: Հայաստանում այդպիսի քաղաքներից կարելի է հիշել Երվանդաշատը, Արշամաշատը, Արտաշատը, Ջարեհավանը, Տիգրանակերտը, Վաղարշապատը և ուրիշները: Քաղաք «հիմնադրելը», սակայն, բոլորովին չէր նշանակում նրա ստեղծելը մի դատարկ տեղում: Նոր քաղաքների մեծամասնությունը հիմնադրվում էր արդեն գոյություն ու-

¹ Հմմտ. Τρεβερ, ОИКА, էջ 207:

նեցող բնակավայրերի, տաճարների, հին քաղաքների, բերդերի բազայի վրա: Որոշ դեպքերում հիմնադրողը սահմանափակվում էր արդեն գոյություն ունեցող քաղաքի անունը փոխելով: Բայց բոլոր այս դեպքերում «հիմնադրման» ակտը արտահայտվում էր չէլձա բայով, ինչպես մեր արձանագրության մեջ:

Մի հետաքրքիր հուշարձան է պահպանվել, որը բացահայտում է հին արևելյան տրադիցիաների դերը վերոհիշյալ սովորույթի մեջ: Դա սելևկյան Անտիոքոս Ա թագավորի ակկադերեն լեզվով գրված սեպագիր արձանագրությունը պարունակող մի կավե պրիզմա է: Անտիոքոսը այստեղ և՛ ըստ տիտղոսի, և՛ ըստ ֆունկցիաների ներկայանում է որպես մի տիպիկական «արևելյան դեսպոտ»: Նրա տիտղոսն է šar Babili šar matate «Բաբելոնի թագավոր, երկրների թագավոր», այսինքն մի տիտղոս, որը հատուկ էր հին արևելյան այն պետությունների թագավորներին, որոնց մասն էր կազմում Բաբելոնը (օրինակ՝ Աքեմենյաններին):

Բերում ենք արձանագրության մեզ հետաքրքրող հատվածը. «Երբ ես իմ սիրտը դարձրի դեպի էսագիլայի և էզիդայի շինարարությունը, աղյուսները... ես կաղապարեցի և... ադդար ամսի 20-րդ օրը, 43 թվին¹, էզիդայի՝ Նարու աստծու հարազատ տաճարի, որ Բարսիպում է գտնվում, էզիդայի հիմքը ես դրեցի»:

Հայտնի է, որ ինչպես էզիդան (Նարու աստծու տաճարը՝ Բարսիպ քաղաքում), այնպես էլ՝ Էսագիլան (Բել աստծու տաճարը՝ Բաբելոն քաղաքում) գոյություն են ունեցել Անտիոքոս Ա-ից շատ առաջ, և այսպիսով պարզվում է, որ խոսքը այստեղ ոչ թե հիմնադրման մասին է բառիս նեղ իմաստով, այլ վերականգնման, ռեստավրացիայի մասին:

Ամենայն հավանականությամբ Գառնիի արձանագրությունն էլ մի այսպիսի «հիմնադրման» մասին է խոսում: Երբ էլ փորագրված լինի արձանագրությունը, Տրդատ Ա-ից ուշ, թե նրա ժամանակ՝ աներկրայելի է, որ Գառնիի բերդը գոյություն է ունեցել դրանից առաջ: Ըստ Տակիտոսի ցուցմունքի, այն գոյություն է ունեցել մ. թ. 51—52 թվերին,² իսկ հնագիտական տվյալները ցույց են տալիս, որ այն կառուցվել է այդ ժամանակից շատ առաջ³:

Մեր արձանագրության մեջ δεσποτης տերմինի օգտագործումը պետք է փորձ անել բացատրելու, ելնելով նույն վերոհիշյալ սովորույթից: Այդ տերմինն ունի «տեր» („ГОСПОДИН“, „ХОЗЯИН“) նշանակությունը և, այստեղից, «բացարձակ միապետ», «գերագույն տեր» նշանակությունը: Ամենից հաճախ այս տերմինը օգտագործվում է տիրոջը ստրուկին, կամ իշխանության գլուխ կանգնած մարդուն՝ իր հպատակին հակադրելու դեպքում⁴:

Այս իմաստով է կիրառված հիշյալ տերմինը և մեր արձանագրության մեջ: Կիրառված է այն պատճառով, որ անհրաժեշտ էր ընդգծել, շեշտել, որ

¹ Սելևկյան էրա. համապատասխանում է մ. թ. ա. 268 թվի մարտի 28-ին:

² F. H. Weissbach, Die Keilinschriften der Achameniden, Lpz., 1911, էջ 132:

³ Տակիտոս, Տարեգրություններ, XII, 45:

⁴ Б. Ар келян, Гэрн, էջ 35—36:

⁵ Հմմտ. Тревер, ОВКА, էջ 201: Հեղինակի կարծիքով δεσποτης տերմինը միշտ կիրառվում է տիրոջ հանդեպ, նրան ենթակա անձի կողմից: Պետք է ասել, որ այս տեսակետը չափազանց սահմանափակում է հիշյալ տերմինի բովանդակությունը:

րերդի հիմնադրումը հատկապես թագավորի ֆունկցիա է, թագավորի, որպես գերագույն, սուլերեն տիրոջ, և անհրաժեշտ էր հակադրել այդ թագավորական ֆունկցիան հպատակի ֆունկցիային՝ լիտուրգիային:

Վերջում մի քանի խոսքով անդրադառնանք Հայաստանում լիտուրգիայի առաջացման և զարգացման հարցերին: Լիտուրգիայի ինստիտուտը, որը հատկանշական էր հունական պոլիսների համար, λειτουργία (կամ λειτουργία) տերմինի հետ միասին հայտնվել է Հայաստանում անշուշտ հելլենիստական շրջանում: Պոլիսային կյանքի ազդեցության ներթափանցման համար ամենահարմար պայմանները ստեղծվել էին Տիգրան Բ-ի ժամանակ: Իհարկե նման ազդեցություններ առաջ էլ են եղել, բայց Տիգրան Բ-ի ժամանակ Հայաստանի քաղաքներում բնակեցվել են հելլենիստական պոլիսների բնակչության սովոր զանգվածներ, որոնք իրենց հետ բերել են իրենց սովորություններն ու ինստիտուտները, որոնց թվում և լիտուրգիան¹:

Դասված լինելով նախապես քաղաքային համայնքի, պոլիսի օգտին որևէ դործ կատարելու հետ, լիտուրգիան տեղական պայմանների ազդեցության տակ, հավանորեն նաև տեղական համանման ինստիտուտների ներգործման հետևանքով, ստացել է թագավորին ծառայություն մատուցելու բնույթը, թեև դրանով չէր բացառվում, որ լիտուրգիան այնուամենայնիվ կատարվում է քաղաքի օգտին: Այդ երևում է Պլուտարքոսի մի հաղորդումից, որն իր բովանդակությամբ հիշեցնում է Գառնիի արձանագրությունը, թեև չունի ոչ «լիտուրգոս», ոչ էլ «լիտուրգիա» տերմինների հիշատակումը: «Որովհետև բոլոր մասնավոր անձինք և իշխանավորները թագավորի (խոսքը Տիգրան Բ-ի մասին է — Գ. Ս.) հանդեպ ունեցած իրենց սիրո և հարգանքի պատճառով (հոգ էին տանում) քաղաքի (Տիգրանակերտի — Գ. Ս.) աճման և շինարարության մասին՝ քաղաքը ի էր գանձերով և շինություններով»:

Այս հաղորդումից երևում է, որ լիտուրգիան Հայաստանում գոյություն է ունեցել արդեն Տիգրան Բ-ի ժամանակ:

Գառնիի արձանագրությունը տալիս է Հայաստանում լիտուրգիայի զարգացման հաջորդ փուլը, երբ արդեն տրադիցիան կոտակված էր այն չափով, որ հնարավոր էր դարձել հատուկ ստանդարտ ֆորմուլայի առաջացումը լիտուրգիայի դործողությունը վավերացնելու համար:

Հետագայում լիտուրգիան խոր արմատներ է ձգել Հայաստանում³:

¹ См. Г. Саркисян, Градостроительство в Армении при Тигране II и вопрос о переселении чужестранцев. ЗУՄԹ ԴԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1955, № 2, էջ 58:

² Պլուտարխ, Հուկույուն, XXVI:

³ И. А. Орбели. О двух терминах в надписях Ани. Անհրաժեշտ հատվածք բերված է Կ. Վ. Տրեյերի զրթում (ОИКА, էջ 206, ծան. 2):